

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

25.10.2019

**ք.Երևան**

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 34 անդամներից 28-ը:

(գրանցացուցակը կցվում է)

Նախքան օրակարգի հարցերին անցնելը գիտխորհրդի նախագահ պրոֆեսոր Դ.Խիթարյանը շնորհավորեց 60-ամյա հորեյանի կապակցությամբ ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնի դոցենտ Կ.Դանիելյանին և ըմբշամարտի ամբիոնի դոցենտ Կ.Կիրակոսյանին: Շնորհակալագիր հանձնեցին ՄՌԿ բաժնի նախկին պետ Է.Հակոբյանին:

Գիտական խորհրդի անդամները հաստատեցին նիստի օրակարգը:

**Օրակարգ՝**

**1. ՀՖԿՍՊԻ հիմնադրամի 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի 2018-2020 ուստարվա գործողությունների կատարողականի մասին:**

(Ձեկուցող՝ դոցենտ Ա.Գյոզալյան)

**2. Մարզական լրագրության և շախմատի ամբիոնի ասիստենտ Գոհար Մուրադյանին ինստիտուտի հայցորդ ձևակերպելու մասին:**

(Ձեկուցող՝ ուսումնագիտական աշխատանքների գծով

պրոռեկտոր, պրոֆեսոր Գ.Սարգսյան)

**3. ՀՖԿՍՊԻ հիմնադրամի նոր կազմակերպական կառուցվածքի քննարկման մասին:**

(Ձեկուցող՝ ռեկտորի ժ/պ պրոֆեսոր Դ.Խիթարյան)

**1.ԼՍԵՑԻՆ՝** դոցենտ Ա.Գյոզալյանին: Նա ներկայացրեց ՀՖԿՍՊԻ 2018-2020 ուսումնական տարվա գործողությունների կատարողականը:

(Զեկուցումը կցվում է)

Զեկուցողին տրվեցին հարցեր (պրոֆեսոր Հ.Բաբայան, Ա.Նուշիկյան, Օ.Պետրոսյան, պրոֆեսոր Գ.Սարգսյան, պրոֆեսոր Դ.Խիթարյան), որոնք ուղղված են ուսումնական գործընթացի բարելավմանը, գիտական ներուժի բարձրացմանը, պարզաբանվում էր ռազմավարական ծրագրի արդյունավետությունը, հարցեր տրվեցին կապված քոլեջի կարգավիճակի հետ, կատարողականի ցուցիչների հետ:

Դոցենտ Ա.Գյոզալյանի կողմից տրվեցին պատասխաններ կապված ռազմավարական ծրագրի կատարողականի հետ, նա նշեց, որ գործունեությունը ուղղված է եղել թերությունների շտկման վրա և կատարված է աշխատանքների 60%-ը:

Պրոֆեսոր Հ.Բաբայանը նշեց, որ զեկույցում ներկայացված են միջոցառումներ, որոնք ՈԱԲ-ի կողմից չեն կազմակերպվել, նշվել են գործառույթներ, որոնք վերաբերվում են ինստիտուտի գործունեությանը, օրինակ միջազգային օլիմպիական ակադեմիայի ամենամյա միջազգային նստաշրջանները: Կարելի էր ներկայացնել ՀՖԿՍՊԻ կողմից հրատարակված գիտաուսումնական աշխատություններին հատկացված ծախսերը:

Պրոֆեսոր Դ.Խիթարյանը ներկայացրեց որոշ դիտարկումներ կապված կատարողականի հետ: Նա մասնավորապես նշեց , որ զեկույցում արտաքին շահակիցները գրանցված չեն, ժամանակացույցը ստույգ տրված չէ բենչմարքինգը ում հետ է իրականացվել, զեկույցում չեն երևում ուսումնամարզչական գործընթացի բարելավման պայմանները, որ երկրի առաջավոր փորձն է ուսումնասիրվել, ստույգ քանի ուսանող է օգտվել հետազոտական լաբորատորիաների ծառայություններից, անհրաժեշտ է նշել մի քանի անուն և հանդիպում „ինստիտուտ-գործատու,, համագործակցության համակարգում, չեն երևում հանդիպումների արդյունքները, եթե կատարվել են հարցումներ, պետք է նշվեն արդյունքները, որոնք են

հավելվածների նոր ձևաչափերը, նշված է չէ ինչ հանձնաժողով է ձևավորվել վերանայելու, հստակեցնելու գիտական ուղղությունները, իսկ գիտական դպրոցի մասին խոսք չկա, չեն երևում ինստիտուտի դասախոս-գիտնականների որակյալ չափանիշները, զեկույցում նշված է համատեղ վերապատրաստումը, իսկ ինստիտուտը դա արել է մեկ այլ տեղ, ասելով առաջավոր բուհեր, կոնկրետ որ բուհերի մասին է խոսքը նշելով այս կամ այն միջոցառումը կամ աշխատանքները չեն հստակեցվել դրանց քանակը, տեղը ինչ միջոցներով են կազմակերպվել, նախատեսվել է ընդլայնել միջազգային կապեր, սակայն չի երևում քանի ուսանող է արտերկրից ընդունվել այդ ծրագրով:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** 1.Տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2.Հանձնարարել գիտխորհրդի անդամներին մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել գրավոր առաջարկներ կատարողականի վերաբերյալ:

**2.ԼՍԵՑԻՆ՝** ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Գ.Սարգսյանին: Նա ներկայացրեց ասիստենտ Գոհար Մուրադյանի դիմումը, նրան ինստիտուտի հացորդ ձևակերպելու վերաբերյալ:

(Դիմումը կցվում է)

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Մարզական լրագրության և շախմատի ամբիոնի ասիստենտ Գոհար Մուրադյանին ձևակերպել որպես ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հայցորդ՝ կցելով սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնին:

**3.ԼՍԵՑԻՆ՝** Ռեկտոր պրոֆեսոր Դ.Խիթարյանին: Նա ներկայացրեց բոլոր ստորաբաժանումների քաղվածքները, կարծիքները ինստիտուտի կառուցվածքի վերաբերյալ:

Քննարկմանը մասնակցել են 14 ամբիոններ, ստորաբաժանումներ, պրոռեկտորներ, դեկաններ, ուսանողական խորհուրդը, գիտական քարտուղարը:

Պրոֆեսոր Դ.Խիթարյանը անդրադարձավ բոլոր ներկայացված առաջարկություններին:

(քաղվածքները կցվում են)


Գիտական խորհրդի անդամները ելույթ ունեցան տարբեր հարցերի շուրջ, տեղի ունեցավ քննարկում:

ՀՖԿՍՊԻ նոր կառուցվածքի հոգաբարձուների խորհրդում քննարկման հարցը դրվեց քվեարկության

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Միաձայն բաց քվեարկությամբ (կողմ-28, դեմ-0) հավանություն տալ ՀՖԿՍՊԻ հիմնադրամի կազմակերպական նոր կառուցվածքի նախագիծը ներկայացնելու քննարկման հոգաբարձուների խորհրդում:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈՑԵՆՏ՝



Դ.Ս.ԽԻԹԱՐՅԱՆ

Ս. Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ